ԱՆԱՀԻՏ ՀԱՆԵՅԱՆ

ՀԱՅ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՁԱՅՆԵՂ ՇՆՉԵՂ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ԱՐՏԱԲԵՐԱԿԱՆ–ԸՆԿԱԼՈՂԱԿԱՆ ԵՎ ՁԱՅՆԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ավելի քան մեկ դար է անցել այն ժամանակից, երբ առաջին անգամ գերմանացի հնչյունաբան Զիվերսը Աշտարակի խոսվածքի բաղաձայնական համակարգում դիտարկեց ձայնեղ շնչեղների (բ՝, գ՝, դ՝, ձ՝, ջ՝) առկայությունը և փորձեց բնութագրել դրանց արտաբերական հատկանիշները (1): Բաղաձայնի պայթյունի և հաջորդող ձայնավորի միջև իր դիտած հատվածը նա բնորոշեց իբրև «շնչեղացած, ոչ լիահունչ ձայնի մի հատված» (2): Ապա Հր.Աճառյանը (3) 1897-98թթ. Փարիզում Ռուսլոյի հնչյունաբանության լաբորատորիայում, այդ հնչյունները ենթարկեց փորձառական (կիմոգրաֆիկական) հետազոտության, որի արդյունքները մեկնաբանեցին Ռուսլոն, Գրամոնը, Մեյեն (4) փորձելով յուրովի բացատրել ձայնեղ շնչեղների արտաբերական-ձայնաբանական բնույթը, այն է՝ ուժեղ պայթյուն՝ ուշացած ձայնեղությամբ:

Տասնամյակներ անց Գր.Ղափանցյանը, լինելով Աշտարակի խոսվածքի ներկայացուցիչ և մայրենի բարբառի լավագույն գիտակ, որոշակիորեն պարզաբանեց քննվող հնչյունների ձայնեղ հագագային բնույթը՝ դա իրավամբ համարելով ձայնեղ շնչեղները համակարգի խուլ շնչեղների շարքից տարբերակող հատկանիշ (5, 6):

XX դարի 50-ական թվականներին անգլիացի լեզվաբան Ալլենը (7) Նոր Զուղայի բարբառի համանուն հնչյունների կիմոգրաֆիկական հետազոտության արդյունքում բացահայտեց նաև դրանց հաջորդող ձայնավորի յուրօրինակ հատկանիշները, այն է՝ ավելի ուժեղ շնչով և ավելի ցածր տոնով արտաբերությունը:

Անցյալ դարի 50-60-ական թվականներին, երբ հայտնի ամսագրային բանավեճերում («Պատմաբանասիրական հանդես» և "Вопросы языкознания") արծարծվեց նաև հայ բարբառների ձայնեղ շնչեղներով բաղաձայնական համակարգերի հնատիպության խնդիրը, առավել ևս սրվեց հետաքրքրությունն այդ հնչյունների բնույթի նկատմամբ: Դրան անդրադարձան Բենվենիստը, Պիզանին (8), Ֆուրկեն (9), ավելի ուշ՝ 70-80-ական թվականներին՝ նաև Պիսովիչը (10), Գամկրելիձեն, Իվանովը (11)՝ անելով ուշագրավ դիտողություններ դրանց շնչեղության ձայնեղ բնույթի (Բենվենիստ, Գամկրելիձե-Իվանով), «կոկորդային արտաբերության» (Ժ.Ֆուրկե), դրանցում «ձայնեղ աղմուկի տարրի» առկայության (Պիսովիչ) վերաբերյալ:

70-80-ական թվականներից ի վեր ձայնեղ շնչեղների արտաբերական-ձայնաբանական և գործառական բնույթի ուսումնասիրությամբ սկսեց զբաղվել նաև ՀՀ ԳԱԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի փորձառագետ-հնչյունաբան Ա.Խաչատրյանը (12): Նա կատարեց քննվող հնչյունների լսողական, սպեկտրոգրաֆիկական և հնչույթաբանական (Աշտարակ) հետազոտություն՝ Արարատյան բարբառի Աշտարակի և Բայազետի բարբառի Նորադուզ գյուղի խոսվածքների նյութի հիման վրա: Նկատի ունենալով, որ ձայնեղ շնչեղները նշված խոսվածքներում հանդիպում են միայն բառասկզբի ուժեղ դիրքում շեշտված և գրոհային արտաբերությամբ, Խաչատրյանը առաջադրեց դրանց առոգանական (պրոսոդիկ) բնույթի վարկածը: Այս հետազոտությամբ առաջին անգամ փորձառական քննության տվյալներով հաստատվեց հայ բարբառների ձայնեղ շնչեղների և ձայնավորասկիզբ բառերում գործառող ձայնեղ հագագի միջև եղած աղերսը (12):

Այնուհետև, սկսած 1982 թվականից, լեզվի ինստիտուտի հնչյունաբանության բաժնում մեծաքանակ բարբառների ու խոսվածքների նյութերի ընդգրկմամբ նոր թափով ծավալվեց ձայնեղ շնչեղների փորձառական հետազոտության գործը, որին այս կամ այն չափով մասնակցեցին նաև ինստիտուտի այլ աշխատակիցներ (դրանց թվում և տողերիս հեղինակը՝ բարբառագետ): Ձեռնարկվեց բարբառային նյութերի ձայնագրում և գրանցում բարբառագիտական տառադարձությամբ. առաջին անգամ կատարվեց ձայնագրությունների օսցիլոգրաֆիկական հետազոտություն: Դրանց, ինչպես նաև իր

կազմակերպած ընկալողական-լսարանային վերլուծության արդյունքները Ա.Խաչատրյանն ամփոփեց և համապատասխան եզրակացություններով ներկայացրեց 1982թ. Երևանում կայացած Միջազգային հայերենագիտական I գիտաժողովում (13), իսկ ավելի ուշ՝ նաև իր «Ժամանակակից հայերենի հնչույթաբանություն» աշխատության մեջ (14):

Ըստ Խաչատրյանի՝ «Հայերենի շնչեղ ձայնեղները հիմնականում կիսաձայնեղ բաղաձայններ են, որոնք տարբերվում են թե՛ սովորական ձայնեղներից և թե՛ խուլերից ու շնչեղներից» (14): Բնորոշվում են խուլ հպումով. ձայնեղությունը դրանցում սկսվում է պայթյունի պահին կամ անմշան ուշացումով: Դրանց՝ հաջորդող ձայնավորը բնութագրվում է աղմկային յուրա-հատուկ երանգավորումով, որը ձայնապատկերներում (օսցիլոգրամներում) արտահայտվում է ձայնավորի վրա անցնող լրացուցիչ ստվերագծերով և զգալիորեն իջեցնում է նրա տոնը: Որոշ խոսվածքներում շնչեղացումը հաճախ ունենում է ինքնուրույն ձայնաբանական արտահայտություն՝ նման կոկորդային ձայնեղ h-ին: Ինչպես նշում է Խաչատրյանը, «Առհասարակ նկատվում է մի այսպիսի օրինաչափություն՝ շնչեղ ձայնեղներից հետո կարող են լինել երկու իրար բացառող (կամ իրար լրացնող) հատվածներ՝ կա՛մ ձայնեղ h և կա՛մ շնչեղացված (աղմկային երանգով) ձայնավոր» (14):

Խաչատրյանի այս դիտարկմամբ փաստորեն առաջին անգամ նշվեց ձայնեղ շնչեղների հագագային բնույթի՝ ձայնաբանորեն երկակի արտահայտման իրողությունը՝ մերթ իբրև ձայնեղ h, մերթ իբրև «աղմկոտ ձայն»:

Այսպիսով՝ ձայնեղ շնչեղների արտաբերական - ձայնաբանական բնույթի բացահայտման ուղղությամբ հայագիտության մեջ կատարված է բավականաչափ աշխատանք, որի արդյունքները հուսալի հենք են հայերենի բարբառներում ձայնեղ շնչեղների համակողմանի հետազոտության համար: Ուստի այդ հենքին գումարելով նաև մեր կատարած երկարամյա դիտարկումների ու քննության արդյունքները՝ ներկայացնում ենք հայ բարբառների ձայնեղ շնչեղների բնույթի նաև մեր ըմբռնումը:

Արդի հայերենի բարբառների բաղաձայնական համակարգերում ձայնեղ շնչեղները ստուգաբանական միևնույն հիմքն ունեցող (այսինքն՝ հայերենի բ, գ, դ, ձ, ջ գրույթներին համարժեք) հպական ու կիսաշփական այն հնչյուններն

են, որոնց բնորոշ է ձայնեղ կամ կիսաձայնեղ շնչեղության որոշակի հատկանիշ և հպական բաղադրիչի (հատույթի) ձայնային անկայուն բնույթ: Դրսևորելով ձայնեղության, խլության և շնչեղության միախառն հատկանիշներ՝ այսուհանդերձ դրանք չեն նույնանում համակարգի մյուս անդամներից որևէ մեկին՝ ո՛չ ձայնեղներին կամ խուլերին, ո՛չ էլ շնչեղ խուլերին, ինչպես արդեն նշվել է:

Արդի հայերենի բարբառների բաղաձայնական համակարգերում, ըստ հագագային բնույթի յուրահատկությունների, առանձնանում են ձայնեղ շնչեղների արտաբերական-տարածքային երկու հիմնական տարբերակ՝ ուժգնային (ինտենսիվ) և թույլ (15):

I. Ուժգնային (ինտենսիվ) տարբերակի ձայնեղ շնչեղությունը արտահայտվում է ստորին-կոկորդային (լարինգալ) մաքուր կամ աղմկավոր ձայնային արտաբերությամբ, որով էլ հատկանշվում է հնչյունի ինտենսիվ, ուժգնային բնույթը: Հագագային այս յուրահատուկ հնչողությամբ՝ հնչյունի նշված տարբերակը աղերսվում է բաղաձայնական նույն համակարգում ինքնուրույն գործառույթ ունեցող ձայնորդային հագագին՝ c-ին (16) (նախապես տառադարձված յ h h h գրերով). վերջինս հանդիպում է բառասկզբի նախաձայնավորային դիրքում՝ հին հայերենի յ ձայնորդի դիմաց (յստակ-cիստակ, Յակոբ-Cագօպ), ինչպես նաև բառերի մի որոշակի խմբում՝ իբրև հավելավոր հնչյուն (cըմմէն, cագ, cըղուղ...), (17): Ի դեպ, ձայնեղ շնչեղների հագագային բնույթի և ինքնուրույն գործառույթով ձայնորդային հագագի միջև նշված աղերսը լավագույնս վկայվում է նաև հետևյալ իրողությամբ. հավելավոր հագագով մի քանի բայեր՝ cէլնել, cիգ^cալ, cիստըգել, cիլալ, cուզել (որոշակի տարածքում՝ Մուշ-Բուլանուխ...), սահմանական ներկայի կ եղանականիշն ընդունելիս բառասկզբի կc կապակցությունը վերածում են մեկ հնչյունի՝ ձայնեղ շնչեղի՝ գ^cէլնիմ, գ^cիգամ, գ^cիստրգիմ, գ^cիլամ, գ^cուգիմ:

Արտաբերական դասակարգմամբ՝ ձայնեղ շնչեղների ուժգնային տարբերակը, ըստ հայերենի բարբառագիտական տառադարձության նոր համակարգի (16), գրանցվում է հետևյալ կերպ. բ^c, գ^c, դ^c, ձ^c, ջ^c (բ^cէրան, գ^cիր, դ^cուռ, ձ^cոր, ջ^c ուր): Այն գործառում է հայերենի բարբառների կենտրոնական, հարակից արևմտյան և մասամբ արևելյան տարածքի խոսվածքներում (Մուշ, Կարին, Արարատյան դաշտ, Բայազետ, Նոր Ջուղա, Արաբկիր, Շապին

Կարահիսար, Սեբաստիա), որոնց բաղաձայնական համակարգերը երկհագագավոր են՝ խուլ h-ով և ձայնեղ c-ով:

II. Ձայնեղ շնչեղների արտաբերական երկրորդ՝ թույլ տարբերակը ընդհանուր առմամբ ընկալվում է իբրև շնչեղ, սակայն ունի ձայնեղ շնչեղության թույլ, երբեմն խուլի մոտեցող արտահայտություն. իր հագագային բնույթով հստակորեն առանձնանում է նախորդ տարբերակից: Նրանով սկսվող առաջնավանկը չունի նախորդին բնորոշ կոկորդային ինտենսիվ արտաբերությունը: Այս տարբերակով հատկանշվող բաղաձայնական համակարգերը միահագագ են, ունեն միայն խուլ շփական h, որը, ըստ ձայնապատկերների, կարող է մասամբ ձայնեղացած լինել:

Հնչյունի հպական կամ կիսաշփական բաղադրիչը բնույթով մոտ է առաջին տարբերակին, այսինքն՝ տատանվում է ձայնեղության և խլության միջև: Դիտվում են նաև շնչեղության տարբեր աստիճաններ (երբեմն ընդհուպ մինչև չեզոքացում): Սրանց հետևանքով հնչյունը դրսևորում է անցումային գծեր՝ մերթ մոտենալով շնչեղ խուլերի սահմաններին, որոնց զիջում է շնչեղության թուլությամբ, մերթ էլ՝ ոչ շնչեղներին (տե՛ս նաև 18): Այսուհանդերձ, չի նույնանում համակարգի մյուս անդամներին, իսկապես շնչեղ հնչյուն է, թեկուզ և ձայնեղության թույլ արտահայտությամբ. դա համակարգի՝ յուրահատուկ բնույթով մի անդամն է: Հետևաբար պետք է դիտվի իբրև ձայնեղ շնչեղի արտաբերական մի տարբերակը՝ միշտ նկատի ունենալով անվանման հարաբերական բնույթը (Աճառյանի սկզբունքով):

Ձայնեղ շնչեղների թույլ տարբերակը, ըստ տառադարձության վերոհիշյալ համակարգի, գրանցվում է հետևյալ գրանշանով՝ բ, գ, դ, ձ, ջ (բէրան, գիր, դուռ, ձոր, ջուր): Այն գործառում է հայ բարբառների արևմտյան (փոքրասիական) ցրիվ տարածքում (Ակն, Զառա քաղաքներ, Դիվրիկ (Խուռնավուլ գ.), Խոտրջուր, Նոր Նախիջևան, Ասլանբեկ...):

Փորձառական (օսցիլոգրաֆիկական) հետազոտության տվյալների համաձայն՝ ձայնեղ շնչեղների նշված երկու տարբերակները բնորոշվում են հետևյալ ձայնաբանական հատկանիշներով.

I. Ձայնապատկերներում հնչյունի հպման ու պայթյունի փուլերը հատվածաբար ներկայացնում են նրա հպական և կիսաշփական բաղադրիչը,

որն իր ոչ միաբնույթ դրսևորմամբ ընդհանուր է երկու տարբերակների համար էլ. նրան հատուկ է լայն տատանում ձայնեղությունից մինչև լիակատար խլություն՝ վերջինիս գերակշռությամբ: Ըստ այդմ՝ բաղադրիչը լինում է.

ա) ամբողջապես խուլ՝ խուլ հպում+խուլ պայթյուն կաղապարով, որը ցուցաբերում է ամենամեծ հաճախականությունը.

բ) կիսաձայնեղ՝ խուլ հպում+ձայնեղացած պայթյուն կաղապարով, որն ընդգրկում է փորձառված բառերի մոտ մեկ երրորդը (Խոտրջուր, Ալաշկերտ, Բուլանուխ...).

գ) լիակատար ձայնեղ՝ ձայնեղ հպում+ձայնեղ պայթյուն կաղապարով. վերջինս անկախ դիրքում հազվադեպ է հանդիպում, հիմնականում դրսևորվում է խոսքի շղթայում՝ ձայնավորային-ձայնեղային միջավայրում (Գյումրի):

2. Ձայնապատկերներում ձայնեղ շնչեղների ուժգնային տարբերակի կոկորդային, հագագային բնույթն ունի երկակի դրսևորում.

ա) մի դեպքում դա պայթյունի փուլին հաջորդող առավել կամ նվազ ուժգնությամբ (ինտենսիվությամբ) արտահայտված ձայնորդաձայնավորային հատույթ է՝ 70-90 մվ տևողությամբ, որ հստակորեն առանձնանում ու տարբերվում է հաջորդող ձայնավորի պատկերից, այսինքն՝ ձայնորդանման հատված, որին հաջորդում է ձայնավորի ընդհանուր առմամբ մաքուր պատկեր:

բ) Մյուս դեպքում հնչյունի հագագային բնույթն արտահայտվում է աղմկային երանգի ձևով, որը երևան է գալիս ձայնավորի սկզբնային հատվածում՝ երբեմն ամբողջապես տարածվելով նրա վրա. նշենք, որ ամբողջությամբ երանգավորված աղմկոտ ձայնավորը հաճախադեպ չէ, դիտված է Բուլանուխի 43 փորձառված բառերից միայն 3-ում, Արծափի 20-ից՝ 2-ում, Գավառի 28-ից՝ 2-ում: Երանգավոր այս հատվածի տևողությունը մոտավորապես 40-85 մվ է, որին սովորաբար հաջորդում է ձայնավորի մաքուր գծապատկերը: Ի դեպ, ձայնաբանական այս նույն բնութագիրը բառասկզբի դիրքում հատուկ է նաև համակարգում ինքնուրույն գործառույթ ունեցող ձայնորդային c հագագին (17):

Հիշեցնենք, որ ձայնեղ շնչեղների հագագային բնույթի նշված երկակի դրսևորումները Ա.Խաչատրյանը համարել է կա՛մ «միմյանց բացառող, կա՛մ միմյանց լրացնող» հատվածներ: Մեր կարծիքով՝ դրանք լրացնում են միմյանց. երևույթը, ըստ ամենայնի, բացատրվում է հնչյունի հագագային արտաբերու-

թյան մեջ ձայնի և աղմուկի համադրության տարբեր աստիճաններով. առաջին դեպքում գերիշխում է ձայնային-ձայնորդային տարրը, աղմուկը լինում է աննշան, ուստի և հնչյունի հագագային բնույթը ստանում է ինքնուրույն ձայնաբանական արտահայտություն. իսկ երկրորդ դեպքում ձայնեղությունն ուղեկցվում է հագագային ուժգին աղմուկով, որը, երբեմն սկսվելով պայթյունի փուլի հետ միաժամանակ, մասամբ, հազվադեպ՝ ամբողջությամբ տարածվում է ձայնավորի պատկերի վրա: Մեր կարծիքով այս երևույթի բացատրությունը որոշ չափով պարփակված է նաև հնչյունի հագագային արտաբերության եղանակի և տևողության մեջ. համեմատաբար հանդարտ և ծիգ արտաբերությունը պայմանավորում է հագագային փուլի երկար տևողությունը, որը աղմուկի աննշանության և ձայնային տարրի գերակշռության պարագայում ստեղծում է ձայնորդային հագագի հատույթավորման, առանձնացման հնարավորություն: Իսկ ուժգին և կտրուկ արտաբերության հետևանքով հնչյունի հագագային բաղադրիչը չի առանձնանում իր տևողությամբ, այլ ծուլվում է ձայնավորի սկզբնական հատվածին՝ իբրև ձայնավորացած արտաբերություն, և հագագային աղմուկի հետ դրսևորվում թավ ստվերագծերով. բնականաբար, նման դեպքերում ձայնավորի տևողությունն է երկարում՝ հագագի աղմկոտ ձայնեղության հետ համատեղման հետևանքով:

Այսպիսով՝ ձայնեղ շնչեղների ուժգնային տարբերակը (ինչպես նաև ինքնուրույն գործառույթով ձայնորդային հագագը), իր յուրահատուկ ձայնաբանական արտահայտությամբ հանդերձ, վանկի սահմաններում սերտ հարմարեցական (ակոմոդացիոն) աղերսի մեջ է հաջորդող ձայնավորի հետ: Որքան ավելի ուժգնային և աղմկոտ է այս հնչյունների արտաբերությունը, այնքան ավելի ցայտուն է արտահայտվում նշված աղերսը: Ուստի և ձայնեղ շնչեղին հաջորդող ձայնավորը նույնպես ունի իր ձայնաբանական յուրահատկությունները.

ա) բառի մյուս -վանկարարների համեմատությամբ նրա տևողությունը սովորաբար ավելի երկար է. այն երանգավոր հատվածի հետ միասին հաշվվում է մինչև 200 և ավելի մվ (հատկապես Գյումրիի խոսվածքում). ընդհակառակը, ձայնորդանման հագագային հատույթին հաջորդող ձայնավորի տևողությունը

համեմատաբար կարճ է, մոտավորապես 80-120 մվ, միավանկ բառերում՝ քիչ ավելի, սովորաբար 150-160 մվ:

բ) Ձայնավորի աղմկային երանգը, որը, ինչպես նշել է Ա.Խաչատրյանը, արտահայտվում է նրա հիմնական պատկերի վրա տարածվող «լրացուցիչ ստվերագծերով», նկատելիորեն ազդում է ձայնավորի տոնի վրա՝ իջեցնելով այն (14): Սակայն, քանի որ ձայնավորի երանգավոր հատվածը միաժամանակ աղմկոտ հագագի ձայնաբանական արտահայտությունն է, ապա տոնի ցածրությունը, բնականաբար, պետք է համարել ձայնորդային հագագի առանձնահատկությունը. վերջինս իր ստորին-կոկորդային արտաբերությամբ իսկապես ազդում է նաև ձայնավորի տոնի վրա: Այս առումով ուշագրավ է Ա.Խաչատրյանի հետևյալ դիտողությունը ձայնեղ շնչեղների վերաբերյալ. «Այդ հնչյունների արտաբերության ժամանակ խռչակը նկատելիորեն իջնում է, որն, ըստ երևույթին, հենց տոնի իջեցման պատճառն է, քանի որ խռչակի իջեցման հետևանքով մեծանում է կոկորդային հնչարանը» (14):

Ի. Ձայնեղ շնչեղների թույլ տարբերակի հագագային բնույթը ձայնապատկերներում (ըստ Խոտրջուրի բարբառի նյութերի) արտահայտված է պայթյունի փուլին հաջորդող կարճ ձայնային հատվածով (մոտ 30-35 մվ), որն ունի թույլ սկիզբ, բայց համաչափորեն ինտենսիվանում է ձայնավորի ուղղությամբ, կամ էլ՝ աստիճանաբար ձայնեղացող շփական հատույթի պատկերով (ձայնեղացած h՝ մոտ 40-50 մվ տևողությամբ): Ըստ որում, շնչեղությունը երբեմն կարող է և արտահայտված չլինել: Հաջորդող ձայնավորը ունի թույլ ուժգնությամբ սկիզբ (եթե ձայնավորի սկիզբը համարելու լինենք նշված ձայնային հատվածը), հաճախ անհամասեռ գծապատկեր, որի վրա երբեմն դիտվում է աղմկային երանգի որոշ արտահայտություն. սրանք անժխտելի են դարձնում ձայնեղ շնչեղի թույլ տարբերակի ինչ-որ չափով կամ ձևով ներգործությունը վանկարար ձայնավորի վրա: Բարբառի բաղաձայնական համակարգից բացակայում է ձայնավորասկիզբ բառերում գործառող կոկորդային ձայնորդանման հագագը, հետևաբար ձայնեղ շնչեղությունը իրացվում է կա՛մ ձայնային նշված կարճ, թույլ հատվածով, կա՛մ խուլ հագագի ձայնեղ շփական տարբերակով (ձայնեղացած h), ինչը որ՝ ոչ հետևողականորեն դիտվում է մի քանի բառերի ձայնապատկերներում: Այսինքն՝ խուլ շփական

h–ն բնույթով ամբողջապես խուլ չէ. բառասկզբի նախաձայնավորային դիրքում այն հաճախ դրսևորում է կիսաձայնեղ շփականի հատկանիշ. խուլ սկսվում, ձայնեղ ավարտվում է:

Այսպիսով՝ ձայնեղ շնչեղների թույլ տարբերակը, ըստ Խոտրջուրի բարբառի նյութի փորձառական քննության, ունի ձայնեղության թույլ բնույթ: Հենց դա էլ ձայնեղ շնչեղների երկու տարբերակներն առանձնացնող հիմնական հատկանիշն է, որով բացատրվում են նաև դրանցով սկսվող առաջնավանկերի արտաբերական-առոգանական յուրահատկությունները՝ ուժեղ բառասկիզբ-թույլ բառասկիզբ ընդհանուր բնորոշմամբ: Այս կապակցությամբ . նշենք նաև, որ բարբառային որոշ միավորներում ձայնեղ շնչեղները գործառում են ոչ միայն բառասկզբի, այլև բառամիջի հատկապես միջձայնավորային դիրքում. սա հավաստվել է նաև փորձառական քննության տվյալներով (ագ՞ահ՝ Գավառ, բ՞օրբ՞ոս՝ Բուլանուխ): Այս դիրքերում ակնառու է դրանց հպման փուլի ձայնեղությունը և ձայնեղ կամ խուլ պայթյունին հաջորդող ձայնորդաձայնավորային թեկուզ կարճ տևողությամբ հատվածի առկայությունը. և դա, բնականաբար, կապ չունի բառասկզբի առոգանական երևույթների հետ, որոնք, մեր կարծիքով, մեկնաբանվում են քննվող հնչյունների արտաբերական և ձայնաբանական նշված յուրահատուկ բնույթով:

Այսպիսով՝ հայերենի բարբառներում՝

1. ձայնեղ շնչեղների և ձայնորդային c հագագի ձայնեղ շնչեղությունը իրականում հնչյունական մակարդակի հատկանիշ է և ունի իր ձայնաբանական յուրահատուկ երկակի արտահայտությունը:

2. Օժտված լինելով հանդերձ հնչյունական ինքնությամբ՝ թե՛ ձայնեղ շնչեղները, թե՛ ձայնորդային հագագը բնականաբար սերտ հարմարեցական աղերսի մեջ են վանկարար ձայնավորի հետ: Այսուամենայնիվ, ձայնեղ շնչեղությունը մեր կարծիքով վանկային հատկանիշ չէ:

3. Ե՛վ ձայնեղ (c) ու կիսաձայնեղ ( ), և՛ խուլ (h) հագագների, դրանցով բնորոշվող ձայնեղ շնչեղ և խուլ շնչեղ բաղաձայնական շարքերի առկայությունը ամենակարևոր ապացույցն է, որ շնչեղությունը՝ կոկորդայնությունը, լինի ձայնեղ, կիսաձայնեղ, թե խուլ, հայերենի բարբառներում հնչյունական, մասնավորապես բաղաձայնական մակարդակի հատկանիշ է:

1. E. Sievers, Grundzuge der Phonetik, ed 4, Leipzig, 1893, 158.
2. E. Sievers, Grundzuge der Phonetik, ed 5, Leipzig, 1901, 171-174.
3. Հր.Աճառյան, Les explosives de Lancien Armenien etud dans les dialectes modernes, Paris, 1899.
4. Ա.Մեյե, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 1973, 60:
5. Գր.Ղափանցյան, Ընդհանուր լեզվաբանություն, հ. 1, Եր., 1939119-120:
6. Г.Капанцян, Аштаракский говор, Историко-лингвистические работы, т. II, Ер., 1975, 443.
7. W.S.Allen, Notes on the phonetics of an Eastern Armenian speaker. Transaktions of the Philological Society of America., Oxford, 1950. 180-206.
8. В.Пизани, Об армянских отражениях индоевропейских взрывных, ВЯ, 1961, N4,47. (Պիզանին հղում է Բենվենիստին՝ La mutation consonantique et les dialectes, BSLP, LIV, 1, 1959, էջ 53) :
9. Ж.Фурке, Генезис системы согласных в арм. языке, ВЯ, 1959, 6,72.
10. A.Pisowicz, Le Developpement du consonantisme Armenien, Krakowie, 1976,17.
11. Т.В.Гамкрелидзе, Вяч.Вс.Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, 1984, т.1,15.
12. А.А.Хачатрян, Природа звонких придыхательных согласных в некоторых армянских диалектах (на материале аштаракского и норадузского говоров), Лингвистическая география, диалектология и история языка, Ер., 1976,432440.
13. А.А.Хачатрян, Природа звонких придыхательных в арм. диалектах, Միջազգային հայերենագիտական I գիտաժողով, Եր., 1984,327-336:
14. Ա.Հ.Խաչատրյան, Ժամանակակից հայերենի հնչույթաբանություն, Եր., 1988, 139-148:
15. Ա.Ն.Հանեյան, Շնչեղ ձայնեղների արտաբերական տարբերակները հայերենի բարբառներում, Եր., 1986, 60-62:
16.Ձայնեղ շնչեղների տառանշանները՝ ներկայացվում են ըստ հայերենի բարբառագիտական տառադարձության՝ ԳԱԱ Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում մշակված նոր համակարգի (առայժմ՝ անտիպ):
17. Ա.Ն.Հանեյան, Գրաբարի բառասկզբի Յ ձայնորդի արտացոլումը արդի հայերենի բարբառներում, Հայերենի բարբառագիտ. ատլաս 2, Ե., 1985, 32-35:
18. Դ.Կոստանդյան, Խոտրջուրի բարբառային յուրահատկությունների լեզվաաշխարհագրական բնութագիրը, Հայերենի բարբառագիտ. ատլաս, 2, Ե., 1985, 49: